


# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



## Դանիէլ Եւ Առիւծին որջը



Written by: Edward Hughes

Illustrated by: Jonathan Hay

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

Adapted by: Mary-Anne S.

Story 34 of 60

[www.M1914.org](http://www.M1914.org)

*Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada*

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Դարեհն էր նոր թագաւորը Բաբելոնի: Ան խելացի էր: Ան իր թագաւորութեան մէջէն հարիւր քսան հոգի գատեց ամենալաւերը, որպէսզի իրեն օգնեն թագաւորութիւնը կառավարելու համար:




1

Յետոյ ան երեք հոգի անոնց մէջէն գատել, որպէսզի անոնց պատասխանատու ըլլան: Դանիէլ այդ երեքէն մէկն էր:




2

Դարեհ թագաւոր շատ կը յարգէր Դանիէլին, ան մտածեց, որ անոր ընդհանուր կառավարիչ կարգէ ամբողջ թագաւորութեան վրայ:



3

Մնացեալ կառավարիչները կը նախանձեղին անկէ: Անոնք ծրագրեցին որպէսզի որեւէ սխալ գտնեն Դանիէլի վրայ, որպէսզի Դանիէլին փորձանքի մատնեն թագաւորին հետ:



4

Որքան որ փորձեցին, այդ կառավարիչները չէին կրնար Դանիէլի վրայ սխալ մը գտնել: Դանիէլ անկեղծ էր թագաւորին հանդէպ եւ իր գործերուն ամենալաւագոյնը կ'ըներ:




5

Նախանձ առաջնորդները գիտէին, որ միակ միջոցը անոր թակարդի մէջ ձգելն էր: Անոնք գիտէին, թէ բան մը չկայ աշխարհի վրայ, որ անոր ետ կը դարձնէր Իսրայէլի Աստուծուն պաշտելէն:



6

Դանիէլի թշնամիները որոշում առին եւ ծրագիր մը գծեցին: Անոնք նոր օրէնք մը պատրաստեցին, որպէսզի թագաւորը ստորագրէ: Օրէնքը կը ստիպէր բոլորը, որպէսզի միայն աղօթեն Դարեհ թագաւորին:




7

Դարեհ թագաւոր կը ստորագրէ այս օրէնքը:




8

Նոր օրէնքը երբեք տարբերութիւն չ'ըրաւ Դանիէլի: Ան նոյն ձեւով շարունակեց: Ան օրը երեք անգամ ծունկի եկաւ բաց պատուհանին առջեւ եւ աղօթեց երկինքի Աստուծոյն:




9



Նախանց առաջնորդները շտապեցին թագաւորին քով: Դարեհ թագաւոր ճար չունէր, ան ձերբակալել տուաւ Դանիէլը: Օրէնքը պետք էր, որ յարգուի:

10

Դանիէլ պետք էր, որ մեռնի: Թագաւորը շատ փորձեց, բայց որեւէ ուրիշ միջոց չգտաւ օրէնքը փոխելու:



11

Դանիէլ մահապատիժի դատապարտուեցաւ առիւծներու որջին մէջ նետուելով: Նախքան Դանիէլ նետուելը անօթի առիւծներուն որջին մէջ, Դարեհ թագաւոր անոր ըսաւ. "Քու Աստուածդ, որուն դուն կը ծառայես տեսական, Ան քեզի պիտի փրկէ":




12

Թագաւորը այդ գիշեր չքնացաւ: Առաւօտ կանուխ յաշորդ օրը ան արագ մը վազեց առիւծներուն որջը:



13

Դարեհ թագաւոր պոռաց. "Դանիէլ, ծառան ապրող Աստուծոյ, կրցա՞ւ քու Աստուածդ, որուն դուն միշտ կը ծառայես, ազատել առիւծներէն": Թերեւս ան պատասխան չէր սպասեր: Բայց Դանիէլ պատասխանեց:




14

Դանիել կանչեց "Օ՛ թագաւոր, իմ Աստուածս իր հրեշտակը դրկեց եւ առիւծներու բերանները գոցեց, որպէսզի վնաս չհասցնեն ինձի: Նաեւ, Օ՛, թագաւոր, ես որեւէ սխալ չգործեցի քեզի":




15

Դարեհ թագաւոր շատ ուրախացաւ: Ան հրամայեց, որ Դանիելը բարձրացուի, անդունդէն:




16

Թագաւորը գիտեր, թէ Աստուած փրկեց Դանիելը եւ թէ Դանիելին թշնամիները Աստուծոյ թշնամիներն են: Ան հրամայեց, որ ով որ խաբէց զինք, որպէսզի ստորագրէ այդ գէշ օրէնքը, առիւծներու որջին մէջ նետուին: Առիւծները կերան անոնց:



17

Դանիել թագաւոր կ'ուզեր, որ աշխարհը ճանչնայ, թէ երկինքի Աստուածը փրկեց իր հաւատարիմ ծառան՝ Դանիելը: Թագաւորը նամակ մը գրեց, որուն մէջ հրամայեց ամեն անձ, որ ապրող Աստուծոյ պաշտէ: Եւ թագաւորը Դանիելի ետ դարձուց պատիւը եւ առաջնորդի դիրքը:



18

Դանիել եւ Առիւծին որջը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Դանիել 6

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի իսկիւն վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներքէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կէտանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կէտանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ւ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

